ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ 24/22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 27 մայիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Նարեկ Համբարձումյանի, Արամայիս Փաշինյանի, և Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2022 թվականի մայիսի 27-ին քննելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Գոռ Գագիկի Թորոսյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում սխալ ներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի մայիսի 24-ի N ՎԻՎ 24/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը.

ՊԱՐԶԵՑ

1.Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, 2020 թվականի մարտի 25-ի ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ

225

կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով, իրականացնելով դատավորների հայտարարագրերի վերլուծություն, պարզել է, որ Գոռ Գագիկի Թորոսյանը 2021 թվականի մայիսի 29-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում տարեսկզբին հայտարարագրել է 1,353,847 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 1,206,317 ՀՀ դրամ անկանխիկ դրամական միջոցներ: Մինչդեռ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ Գոռ Գագիկի Թորոսյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա է եղել 1,889,456 ՀՀ դրամ հաշվի մնացորդ, 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,024,589 ՀՀ դրամ հաշվի մնացորդ, ինչի առնչությամբ 2022 թվականի մայիսի 24-ին հարուցել է թիվ ՎԻՎ 24/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

1.2 Հանձնաժողովը 2022 թվականի մայիսի 24-ին Գոռ Թորոսյանին է հասցեագրել թիվ 01/1036-2022 ծանուցումն Հայտարարագրում հայտնաբերված վերոշարադրյալ անհամապատասխանության վերաբերյալ՝ հրավիրելով 2022 թվականի մայիսի 24-ին վերջինիս ներկայությամբ կազմելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն:

1.3 Գոռ Թորոսյանը Հանձնաժողով է ներկայացրել թիվ 01/1036-2022 ծանուցագրում նշված անհամապատասխանության վերաբերյալ գրավոր դիրքորոշում՝ ներկայացնելով բացատրություն իր կողմից Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցները» բաժնում տարեվերջին անկանխիկ դրամական միջոցները սխալ հայտարարագրելու վերաբերյալ՝ կից ուղարկելով նաև իր բանկային հաշիվների դրամական միջոցների շարժի վերաբերյալ քաղվածքները:

1.4 2022 թվականի մայիսի 24-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 24/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

226

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի մայիսի 27-ին:

2. Վարույթի մասնակցի բացատրությունը.

Գոռ Թորոսյանն իր գրավոր դիրքորոշմամբ, մասնավորապես, հայտնել է, որ տարեսկզբի դրամական միջոցների վերաբերյալ անհամապատասխանության պատճառը այն է եղել, որ հայտարարագիրը լրացնելիս իր անվամբ առկա մյուս հաշվի տվյալները բանկային հաշվում արտացոլված չեն եղել, որը իր կողմից ներկայացված քաղվածքի համաձայն տարեսկզբին կազմել է 501.839 ՀՀ դրամ: Նշված գումարը, համաձայն նրա բացատրության, մուտքագրվել է իր հաշվին դասախոսության արդյունքում ձևավորված վճարներից, ինչը հաստատվում է հաշվի քաղվածքի կրկնօրինակում արտացոլված գումարի ձևավորման աղբյուրներով:

Ինչ վերաբերում է տարեվերջի դրամական միջոցների վերաբերյալ անհամապատասխանությանը (տարբերության չափը՝ 818.272 ՀՀ դրամ), ապա Գոռ Թորոսյանը իր բացատրության մեջ վկայակոչել է այն հանգամանքը, որ իր կողմից հայտարարագրված 1.206.317 ՀՀ դրամը նշվել է 15.12.2020 թվականի դրությամբ, մինչդեռ 31.12.2020 թվականի դրությամբ առկա է եղել 1.460.966,8 ՀՀ դրամ, ինչը արտացոլված է իր կողմից ներկայացված N քաղվածքում:

Ինչ վերաբերում է մնացած 563.622,1 դրամի տարբերությանը, ապա Գոռ Թորոսյանը նշել է, որ այս դեպքում ևս իր անվամբ առկա մյուս հաշվի (տվյալները հայտարարագիրը լրացնելիս արտացոլված չեն եղել քաղվածքում, որը կազմել է ***523.679 ՀՀ դրամ***, ինչը ևս հաստատվում է նրա կողմից ներկայացված քաղվածքով: Նշված գումարը, համաձայն նրա բացատրության, մուտքագրվել է իր հաշվին դասախոսության արդյունքում ձևավորված վճարներից, ինչը հաստատվում է հաշվի քաղվածքի կրկնօրինակում արտացոլված գումարի ձևավորման աղբյուրներով, այն է՝ ՀՀ Փաստաբանների պալատից՝ դասախոսության նպատակով:

3. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովն, ուսումնասիրելով և վերլուծելով գործում առկա նյութերը, կատարելով գործի հանգամանքների համակողմանի քննություն, հաստատված է համարում հետևյալը.

Գոռ Գագիկի Թորոսյանը 2021 թվականի մայիսի 29-ին ներկայացված Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում տարեսկզբին հայտարարագրել է 1,353,847 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 1,206,317 ՀՀ դրամ անկանխիկ դրամական միջոցներ:

Մինչդեռ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ Գոռ Գագիկի Թորոսյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա է եղել 1,889,456 ՀՀ դրամ հաշվի մնացորդ, իսկ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,024,589 ՀՀ դրամ հաշվի մնացորդ, ինչի առնչությամբ 2022 թվականի մայիսի 24-ին հարուցել է թիվ ՎԻՎ 24/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

4. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը:

4.1 Գոռ Թորոսյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցած), իսկ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը: Դրանից բացի՝ նույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված է, որ դրամական միջոցի դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը և արժույթը:

228

4.3 Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Եկամուտը հայտարարագրելիս նշվում են՝ եկամտի տեսակը, եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, եկամուտ վճարողի և նրանց միջև առկա կապի բնույթի մասին տեղեկատվություն, եկամտի չափը (գումարը), եկամտի արժույթը:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.6 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) **ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա**, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, ***այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:***

4.8 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը)

229

կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

4.9 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է գործի վարույթը կարճելու մասին որոշում (----) բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ անզգուշությամբ կատարվել է խախտում, այն է՝

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Գոռ Գագիկի Թորոսյանի կողմից Հայտարարագրի Բ.6.1 «Բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում տարեսկզբին անզգուշությամբ սխալ է հայտարարագրել իր անկանխիկ դրամական միջոցները, այն է՝ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ Գոռ Գագիկի Թորոսյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա է եղել 1,889,456 ՀՀ դրամ հաշվի մնացորդ, իսկ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,024,589 ՀՀ դրամ հաշվի մնացորդ, որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջը, որի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցած): Նշված արարքը հանդիսանում է վարչական զանցանք՝ հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ,

230

սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է, որ Գոռ Թորոսյանի կողմից տարեսկզբին սխալ հայտարարագրված գումարի անհամապատասխանության չափը կազմում է 535.609 (հինգ հարյուր երեսունհինգ հազար վեց հարյուր ինը) ՀՀ դրամ, իսկ տարեվերջին հայտարարագրված գումարի անհամապատասխանության չափը կազմում է 818.272 (ութ հարյուր տասնութ հազար երկու հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի քննության արդյունքներով առկա, հայտարարատուի կողմից ներկայացված բանկային հաշիվների քաղվածքներով հաստատվում է այն հանգամանքը, որ նշված եկամուտը գոյացել է բացառապես ***խախտում կատարած անձի աշխատանքի վարձատրությունից:***

231

Նման պայմաններում Հանձնաժողովը էական է համարում այն, որ հայտարարատուի կողմից ներկայացվել են այնպիսի ապացույցներ, որոնցով հավաստվում է չհայտարարագրված դրամական միջոցների աղբյուրների օրինականությունը՝ ապահովելով պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականության, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության, պետական պաշտոն զբաղեցնող անձի կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության՝ օրենսդրի կողմից հետապնդվող նպատակները:

Բացի այդ, Հանձնաժողովը փաստում է, որ թեև հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում նշված տվյալները չեն ներկայացվել ամբողջական կերպով, սակայն հայտարարագրի «Գ.1. հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում դրանք ներկայացվել են ներառյալ օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա բոլոր տվյալները (եկամտի տեսակը, եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը, եկամուտ վճարողի հասցեն, գումարը, արժույթը): Հանձնաժողովն արձանագրում է, որ սխալ ներկայացված դրամական միջոցների մնացորդների ծագման աղբյուրները համընկնում են հայտարարատու անձի այն եկամուտների հետ, որոնց ծագման աղբյուրները արտացոլվել են «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» դաշտում, հայտարարագրված են ընդհանուր եկամտի շրջանակներում: Եկամտի ծագման աղբյուրներն են՝ ՀՀ նոտարական պալատը, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը, ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

Նշված հանգամանքները մատնանշում են, որ խախտման արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ Գոռ Թորոսյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-

232

ին մասի 2-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ և 282-րդ հոդվածներով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գոռ Թորոսյանին ազատել վարչական պատասխանատվությունից, հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գոռ Թորոսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Գոռ Թորոսյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**